



Տեղեկատվություն դիմողների համար՝

պատասխանող կառավարությանը դիմումի մասին ծանուցելուց հետո գործի քննության կարգի վերաբերյալ

1. Պատասխանող կառավարությանը դիմումի մասին ծանուցելը: Ձեր դիմումի ընդունելիության հարցի նախնական քննությունից հետո, Դատարանը որոշել է, իր կանոնակարգի 54-րդ հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետի համաձայն, դիմումի մասին ծանուցել կառավարությանը և հրավիրել նրան ներկայացնելու գրավոր առարկություններ ամբողջ գործի կամ ներկայացված մեկ կամ ավել գանգատների ընդունելիության վերաբերյալ և ըստ դրանց էության: Եթե ընդունվել է մասնակի որոշում, որով դիմումի մնացյալ մասը ճանաչվել է անընդունելի, ապա տվյալ գանգատ(ներ)ի քննությունը դրանով ավարտվել է, և Դուք չպետք է ներկայացնեք որևէ լրացուցիչ փաստարկներ կամ նյութեր դիմումի այդ մասի վերաբերյալ:

2. Դիմումի ընդունելիության հարցի և ըստ էության համատեղ քննությունը: Կոնվենցիայի 29-րդ հոդվածի 3-րդ կետի և Դատարանի կանոնակարգի 54Ա հոդվածի համաձայն, դիմումների ընդունելիության հարցը կարող է, որպես կանոն, քննվել դրանք ըստ էության քննելու հետ միաժամանակ: Նման դեպքերում, եթե Դատարանը գտնում է, որ դիմումներն ընդունելի են և կարող են քննվել ըստ էության, նա կարող է միանգամից վճիռ ընդունել, Դատարանի կանոնակարգի 54Ա հոդվածի 2-րդ կետի համաձայն:

3. Դիմումի ընդունելիության վերաբերյալ և ըստ էության առարկությունների, ինչպես նաև արդարացի փոխհատուցման պահանջների փոխանակումը: Պատասխանող կառավարությունը պետք է, որպես կանոն, ներկայացնի իր առարկությունները տասնվեց շաբաթվա ընթացքում: Այս առարկությունները ստանալուն պես, նրանք կուղարկվեն Ձեզ, որպեսզի Դուք վեցշաբաթյա ժամկետում ի պատասխան ներկայացնեք Ձեր գրավոր առարկությունները, սովորաբար Կոնվենցիայի 41-րդ հոդվածով նախատեսված ցանկացած արդարացի փոխհատուցման պահանջի հետ միասին: Այն դեպքերում, երբ Կառավարությունը ստացել է՝ առարկությունները իր ազգային լեզվով ներկայացնելու թույլտվություն (Դատարանի կանոնակարգի 34-րդ հոդվածի 4-րդ կետի (ա) ենթակետ), նա պետք է հետագայում՝ չորսշաբաթյա ժամկետում, Դատարանին տրամադրի դրանց թարգմանությունն անգլերեն կամ ֆրանսերեն լեզվով: Այս ժամկետները, որպես կանոն, չեն կարող երկարացվել:

Կառավարության առարկություններին պատասխանելու և Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն արդարացի փոխհատուցման պահանջներ ներկայացնելու Ձեզ ընծայված հնարավորությունից օգտվելու ցանկություն չունենալու դեպքում, Դուք պետք է այդ մասին նույն ժամկետում տեղեկացնեք Դատարանին: Հակառակ դեպքում, Դատարանը կարող է եզրակացնել, որ Դուք կորցրել եք Ձեր դիմումին հետամուտ լինելու հետաքրքրությունը, և որոշում կայացնել Ձեր գործը գործերի ցուցակից հանելու մասին (Կոնվենցիայի 37-րդ հոդվածի 1-ին կետի (ա) ենթակետ):

Ինչ վերաբերում է արդարացի փոխհատուցման պահանջներին, Ձեր ուշադրությունն է հրավիրվում Դատարանի կանոնակարգի 60-րդ հոդվածին, ըստ որի՝ հստակ հաշվարկներ պարունակող պահանջներ, ինչպես նաև համապատասխան հիմնավորող փաստաթղթեր նշանակված ժամկետում չներկայացնելու դեպքում, Դատարանը կարող է ամբողջությամբ կամ մասամբ մերժել Ձեր արդարացի փոխհատուցման պահանջները, նույնիսկ եթե դատավարության ցանկացած ավելի վաղ փուլում Դուք ներկայացրել էք նման պահանջներ:

Բոլոր դեպքերում, արդարացի փոխհատուցում կշնորհվի այն չափով, որը Դատարանը անհրաժեշտ կհամարի: Նման փոխհատուցում կարող է շնորհվել հետևյալ երեք մասերով. 1) նյութական վնաս, այսինքն խախտման հետևանքով անմիջապես ու փաստացի կրած վնասի փոխհատուցում, 2) բարոյական վնաս, այսինքն խախտման հետևանքով առաջացած տառապանք և ապրումներ, 3) ինչպես ներպետական ատյաններում, այնպես էլ Ստրասբուրգում կայացած դատավարության ընթացքում Կոնվենցիայի խախտումը կանխելու կամ խախտված իրավունքը վերականգնելու նպատակով կրած ծախսերը: Այս ծախսերը պետք է ներկայացվեն կետ առ կետ, և Դատարանը դրանք հատուցելու որոշում կկայացնի միայն ողջամիտ, անհրաժեշտ և փաստացի կատարված համարելու դեպքում: Ձեր պահանջներին Դուք պետք է կցեք բոլոր անհրաժեշտ հիմնավորող փաստաթղթերը, ինչպիսիք են օրինակ՝ վճարման դիմաց Ձեզ տրված ստացականները: Այնուհետև, Կառավարությանը հնարավորություն կտրվի ներկայացնելու իր դիտողություններն արդարացի փոխհատուցման պահանջների վերաբերյալ, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, ցանկացած լրացուցիչ առարկություններ դիմումի վերաբերյալ: Ներկայացվող առարկությունների և արդարացի փոխհատուցման պահանջների փոխանակման նպատակով ուղարկվող փաստաթղթերի շրջանառությունը հեշտացնելու նպատակով՝ բոլոր գրավոր փաստարկները, հավելվածներով հանդերձ, հարկավոր է ուղարկել A4 ձևի համարակալված թերթերով՝ առանց դրանք ամրացնելու, ստանձելու կամ այլ կերպ իրար կցելու: Հիշեցման կարգով նշվում է՝ Դատարան ներկայացվող փաստաթղթերի բնօրինակներ չուղարկել:

4. Ժամկետը լրանալուց հետո և առանց Դատարանի պահանջի ներկայացված փաստարկներ կամ նյութեր: Դատարանի կողմից նշանակված ժամկետը լրանալուց հետո, առանց այդ ժամկետը երկարացնելու մասին մինչև դրա լրանալը Դատարանին խնդրանքով դիմելու ներկայացված ցանկացած փաստարկներ կամ նյութեր, որպես կանոն, չեն ընդունվելու Դատարանի կողմից (Դատարանի կանոնակարգի 38-րդ հոդվածի 1-ին կետ): Մակայն, սա չպետք է Ձեզ կանգնեցնի Ձեր գործով տեղի ունեցած ցանկացած կարևոր առաջխաղացումների մասին Դատարանին Ձեր իսկ նախաձեռնությամբ տեղեկացնելուց, ինչպես նաև ներպետական ատյանների կողմից հետագայում կայացված ցանկացած համապատասխան որոշումների պատճենները ներկայացնելուց:

5. Բարեկամական կարգավորումը: Կառավարությանը նույնպես առաջարկվել է նշել իր դիրքը Ձեր գործի բարեկամական կարգավորման վերաբերյալ և այդ կապակցությամբ ներկայացնել իր առաջարկները (Դատարանի կանոնակարգի 62-րդ հոդված): Կառավարության առարկությունները Ձեզ ուղարկվելու ժամանակ Ձեզ նույնպես կարվի նման առաջարկություն: Ըստ Դատարանի կանոնակարգի 62-րդ հոդվածի 2-րդ ենթակետի, բարեկամական կարգավորման շուրջ բանակցությունները պետք է լինեն խիստ գաղտնի, և այդ կապակցությամբ ներկայացվող ցանկացած փաստարկներ ու նյութեր **կամ** առաջարկներ պետք է ներկայացվեն առանձին փաստաթղթով, որի բովանդակությանը **չպետք է** հղում կատարվի հիմնական դատավարության շրջանակներում ներկայացվող որևէ նյութերում:

6. Միակողմանի հայտարարությունը: Սկզբունքորեն, կողմերի միջև բարեկամական կարգավորման շուրջ բանակցությունների անհաջող ելքի դեպքում, Կառավարությունը կարող է օգտվել միակողմանի հայտարարություն անելու հնարավորությունից: Բացառիկ կարգով, կրկնվող բնույթ ունեցող գործերի առնչությամբ, Կառավարությանը իրավունք կվերապահվի բարեկամական կարգավորման ընթացակարգի շրջանակներից դուրս միակողմանի հայտարարություն ներկայացնել: Կառավարության կողմից միակողմանի հայտարարություն ներկայացնելու դեպքում՝ Դատարանը, համաձայն Կոնվենցիայի 37-րդ հոդվածի, կորոշի՝ արդյոք դիմումի հետագա քննությունն արդարացված է, թե՛ ոչ: Եթե Դիմողը համաձայնվի միակողմանի հայտարարության պայմաններին, ապա Դատարանը գործը կքննի բարեկամական կարգավորման ընթացակարգի ներքո:

7. Լեզուների օգտագործումը: Դատավարության այս փուլում, Դատարանի կանոնակարգի 34-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, դիմողների կամ նրանց ներկայացուցիչների բոլոր հաղորդակցությունները պետք է, որպես կանոն, լինեն Դատարանի որևէ պաշտոնական լեզուներից մեկով (անգլերեն կամ ֆրանսերեն): Այնուամենայնիվ, Դատարանը կարող է թույլատրել դիմողին շարունակել օգտագործել Պայմանավորվող կողմի պաշտոնական լեզուն:

8. Իրավաբանական ներկայացուցչությունը և իրավաբանական օգնությունը: Համաձայն Դատարանի կանոնակարգի 36-րդ հոդվածի 2-րդ ու 4-րդ կետերի, դատավարության այս փուլում դիմողը պետք է Դատարանում ներակայացված լինի փաստաբանի կողմից, եթե Դատարանն այլ կերպ չորոշի: Փաստաբան գտնելու դժվարություն ունենալու դեպքում, Դուք կարող եք դիմել Ձեր տեղական կամ ազգային փաստաբանների միությանը՝ փաստաբան գտնելու հարցում Ձեզ աջակցելու խնդրանքով: Փաստաբանական ծառայություններից օգտվելու համար բավարար միջոցներ չունենալու դեպքում, Դուք կարող եք դիմել Դատարանին իրավաբանական օգնության ծրագրի շրջանակներում (Դատարանի կանոնակարգի 105-րդ և հաջորդ հոդվածներ) իրավաբանական օգնություն ստանալու խնդրանքով: Սակայն, իրավաբանական օգնությունը սովորաբար տրվում է միայն փաստի ու իրավունքի բարդ հարցեր շոշափող գործերով, և ոչ թե այն գործերով, որոնք ունեն կրկնողական բնույթ¹: Բացի այդ, Դատարանի իրավաբանական օգնության ծրագրի շրջանակներում տրվող օգնությունը, որն իրենից ներկայացնում է միանվագ վճար, պետք է դիտվի որպես փաստաբանական ծառայությունների հետ կապված Ձեր ծախսերի միայն մի մասը հոգալու նպատակով վճարվող գումար: Վերջապես, իրավաբանական օգնություն տրամադրելը չի նշանակում, որ Դատարանը դիմողին ներկայացուցիչ է նշանակելու: Ներկայացուցիչ գտնելն ու ընտրելն ընկնում է դիմողի պատասխանատվության ներքո:

9. Մեկ այլ Պայմանավորվող պետության միջամտությունը: Եթե Դուք պատասխանող պետության քաղաքացի չեք և հանդիսանում եք մեկ այլ Պայմանավորվող պետության քաղաքացի, ապա այդ պետության կառավարությունը կհրավիրվի մասնակցելու դատավարությանը (Կոնվենցիայի 36-րդ հոդվածի 1-ին կետ և Դատարանի կանոնակարգի 44-րդ հոդված): Դուք կտեղեկացվեք այդ պետության պատասխանի մասին: